Բնակավայրի վարչական ղեկավար՝ Մամիկոն Մուրադյան

Հեռախոս՝ +37494 9 675 82

Զառիթափ գյուղը գտնվում է Վայքի լեռնաշղթայի հարավ-արևելյան մասում։ Ծովի մակերևույթից բարձր է 1400-2100մ։ Հյուսիս արևելքից սահմանակից է պետական անտառ-արգելանոցին, արևելքից Գոմք գյուղին, հարավից Մարտիրոս գյուղին, արևմուտքից Փոռ և Ազատեկ գյուղերին։ Զառիթափ գյուղը հիմնադրվել է 1829թ։

Գյուղի հյուսիսային սահմանով անցնում է Արփա գետը։
Գյուղը փռված է յոթ բլուրների վրա, գյուղամիջով անցնում է Փշոնք գետը, որին միանում են չորս փոքրիկ վտակներ։

Գյուղացիները հիմնական զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ։

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, գործող մանկապարտեզ, առողջության առաջնային պահպանության կենտրոն, մանկապատանեկան տուրիստական բազա։

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Զառիթափ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է ընդամենը 23 հուշարձան։